

փանոս, յետոյ յաջորդաբար Ս. Յովհաննէս, Սննդ մանկունք, Ս. Յակովբ: Թուար 1-ը պարզաբար կ'ըսուի Ութօրէք Ֆննդիան (Octave Noël): Թայտնութեան օրը կը հրատարակուէր Զատիկի տօնին օրը՝ հաստատուած ըստ յոյն արեւելեան գործածութեանց, այնպէս որ երբեմն զատիկը կը տօնուէր Հռովմէ Միլան տարրեք օրեքու մէջ: Մեծ պահքը կը սկսուէր Հռովմէական մոխրոցի չորեքշաբթիին յաջորդող երկու շաբթիէն: Ս. Ամբրոսիոսի օրով Միլանու մէջ Մեծ պահոց շաբաթ օրերը պահք – ծով չկար, ինչպէս էր Արեւելք և Գաղղիա, ինչպէս և Կիրակի օրերը: Մագաղաթին օրը ունէին օրհնութիւն ձիթեանց պատարագին վերջը և Դոնքսպէք: Ս. Ամբրոսիոսի ժամանակ Զատիկէ մինչեւ Պենտեկոստէ յիսուն օրերը կը համարուէին իբրեւ կիրակի օրեր ըստ Հայկականի. ա. մենեւին պահք չկար՝ և կ'երգցուէր աւելելու Ասպէս այս երգը պահուած չէր՝ Հոռոմայեցոց համեմատ՝ միայն զատիկն օրուան, այլ ամբողջ յինանց օրերուն ու թախտութեան օրհնարանութիւն էր:

Մեծ հոգ կը տեսնուի, որ մեծ Պահոց տոնն տօն մը կատարուի բացի Աւետու մէն և նորահաստատ Ս. Թովմէփայ տօնէն: Սոյն խիստ կարգադրութիւնը կը տեսնենք նաեւ Գաղղիական եկեղեցւոյ մէջ:

(Շարունակելի)

Ո. Կ.

1. St. Augustin répète ces mêmes paroles. Respondit (Ambrosius) nihil se docere me posse nisi quod ipse faceret. et ait mihi: Cum Romam venio, jejuno sabbato: Cum hic sum, non jejuno. Գաբիւս Cui (Ambrosio) prandendo nunquam consuetudo fuit nisi die sabbati et dominico vel cum natalitia celeberrimorum martyrum essent. Ambrosien rit 1398.

Ինչ ալ եղած ըլլայ անոնց (Հայերու) ճակատագիրը անցեալին մէջ – և լաւաւ գոյն եղած է – և ինչպիսի ալ որ ըլլայ ան ապագային մէջ՝ իրենց բնաշխարհը պիտի մնայ միշտ երկրազնտիս ամէն հետաքրքրականներէն մին:

ՊԱՅՐԸՆ

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ԶԵՌԱԳԻՐՔ

Ս. ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՔԻՆ

(Շար. տես բազմ. 1925, էջ 229)

ԾԱ.

ԲԺՇԿԱԿԱՆ ԱՍԱՐԱՅ

Ասար Սեբաստացի բժիշկին աշխատութեան մէջ ուրիշ օրինակն է ձեռագիրս, որուն սկզբնական մասը՝ որ է Յառաջաբանութիւնը, պակաս ըլլալուն, ուրիշ գրիչ մը զայն ընդօրինակած և մէջը ազուցած է: Բուն ձեռագիրը կը բաղկանայ 206 էջերէ և 103 բամբակեայ հաստ թուղթէ, գիրը նոսր է և գեղեցիկ, բայց չունի ոչ Յիշատակարան, ոչ ալ ընդօրինակութեան ժամանակի և տեղի յայտնութիւնը:

Զեռագրատան 1399րդ թուահամարը կը կրէ. ունի 21,5 հարիւրորդամեղը մեծութիւն, 15 հարիւրորդամեղը լայնութիւն, և 1,5 հարիւրորդամեղը թանձրութիւն:

*

Երանաշարանութիւնը որ ինչպէս ըսի՝ օտար ու նոր գրիչ մը ընդօրինակած ու դրած է մէջը, կը պարունակէ Ասար Սեբաստացիին անունը, բայց ոչ ընտանիքի ժամանակը:

Ժամանակի կամ թուականի այս պակասը, ինչպէս ուրիշ օրինակներու վրայ խօսած ատենս յայտնեցի, շատ զարմանալի է ու խորհրդաւոր, ինչ որ այս ձեռագրին մէջ ալ կը շեշտուի:

Այս Յառաջաբանութիւնը որ երկու անգամ գրուած կը գտնենք, Հատորիս մէջ, յար և նման է 717 թուահամար ձեռագրին ունեցածին, զոր ամբողջութեամբ դրած եմ արդէն և հարկ չեմ տեսներ կրկնել:

Ունի իւր պարունակութեան ցուցակը, որ 52 զլուխի բաժնուած է. Ասար Սեբաստացիի բժշկարանն է այս միայն. հետը Ապուռայիդի Մարդակազմութիւն չի կայ և այս բժշկարանն ալ թէ սկիզբէն և թէ վերջէն պակասաւոր է:

ԾՐ.

ԳԻՐԲ ԱԿԱՆՑ

ԵՒ

ՄԱՐԴԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ ՄԱՆՈՒԿ ՊՈՆՏԱՑՈՒՑ

Երկու տեսակ նեւթ կը պարունակէ ձեռագիրս, նախ՝ Պատուական քարերու նուիրուած մաս մը, ապա Մարդակազմութիւն մը, որ թէև ՄԱՆՈՒԿ ՊՈՆՏԱՑՈՒՑԻ անունը կը կրէ, բայց էապէս Արուսայիզի եւ Ամիրտուլվաթի գործն է:

19,5 հարիւրդամեղը մեծութիւն, 1,5 հարիւրդամեղը լայնութիւն եւ 1,5 հարիւրդամեղը թանձրութիւն ունի հատորս. կը կրէ՝ 839 թուահամարը. թուղթը հաստ բամբակեայ է. գիրը՝ նոսր եւ գեղեցիկ, ունի կաշէպատ պինդ կողքեր, կը բազկանայ 103 թերթէ՝ 207 էջ գրութեամբ:

*

Առաջին 9 թերթերը եւ 18 էջերը կը խօսին « Յաղագս որպիսոքեան ականց պատասկանաց, բնութեանց կերպից եւ ցոյնոց եւ անուանց նոցին, եւ բնաւ տարբերութիւն չունին պարունակութենէն՝ 801 թուահամար ձեռագրին, զոր դիտեցինք նախապէս, եւ որ՝ պատուական քարերու տեսակներուն եւ անոնց բժշկական յատկութիւններուն կամ ազդեցութիւններուն վրայ կը ճառէր: Ըստ իս՝ նոյն այն գործն է՝ զոր փոքր տարբերութիւններով, կամ լաւ եւս՝ փոփոխութիւններով ընդօրինակած է Մանուկ Պոնտացին:

« Ականց Գիրքին » յաջորդող գործն է՝ « ՄԱՐԴԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ », որուն ներքեւը գրուած է՝

ՕՐԻԴԱԿԵԱՆԱ ԶԵՌԱՄԻ ՄԱՆՈՒԿԻ ՊՈՆՏԱՑՈՒՑ ԵՒ ՌՈՒԻ ԲԺԻՇԿ ՍԱՀԱԿԵԱՆ ԵՒ Ի ԹՈՒԻՆ ՀԱՅՈՑ ՌԲԶ ԻՆ, ԵՂԵԻ Ի ՄԱՏՐԱՔԱՂԱՔԻ ՔԱՅԱ:

*

Այս ՄԱՆՈՒԿ ՊՈՆՏԱՑՈՒՆ՝ ինչպէս ինքն ալ կը յայտնէ՝ որդի էր բժիշկ Սահակի, որ՝ տեսանց թէ կը կոչուէր Պոնտոսացի, եւ

եղած է համբաւաւոր՝ նախ Քաֆայի եւ ապա Եւդոկիոյ մէջ, եւ թէ՛ Ամիրտուլվաթի գործերը կարգի դնելով գրած էր երեք խոշոր բժշկարան, որոնց կը կրեն 1353, 538, եւ 1375 թուահամարները:

Սահակ Պոնտացին իւր առաջին բժշկարանը գրած է 1759ին Քաֆայի մէջ, իսկ որդին Մանուկ Պոնտացին՝ որ իւր յայտնած թուականին մէջ չգիրը մոռցած է, եւ պէտք էր գրեր՝ ՌԻՃԶ (1206), այս Մարդակազմութիւնը կ'օրինակէ 1757ին: Ուստի դժուար չէ ըսել, թէ քանի որ « օրինակեալ » է այն՝ անկասկած Մանուկ իւր Հօրը թելադրութեամբ կամ խորհրդովն է որ գրի առած է զայն:

Մտադիւր ընթերցուած մը ցոյց կու տայ մեզ, որ այս Մարդակազմութիւնն ալ Ամիրտուլվաթի գործերէն առնուած է. ճիշդ Օգոստ թշնոքեան մէջ գտնուած Մարդակազմութեան բաժանումներն ունի այն: Մարդակազմութեան աւարտումէն վերջի ալ կը գտնուի նաեւ Ամիրտուլվաթի Դեղաբանութեան հատուածները:

*

Ըստ այսմ՝ ձեռագիրս ո՛րչափ որ քաղուածոյ՝ աւելի Սահակ բժիշկ Պոնտացիին է վերագրելի, քան թէ՛ որդւոյն՝ Մանուկ Պոնտացիին:

Թէեւ այս վերջինս ալ, կը թուի ինձ թէ՛ իւր հօրը շնորհիւ եւ կամ անոր մահէն յետոյ բժշկութիւն ըրած է եւ բաւական մեծ համբաւ ունեցած է:

Վենետիկի Մխիթարեան վարդապետ հանգուցեալ Հ. Մինաս Բժշկեանի հայրն էր այս, ՄԱՆՈՒԿ ԲԺԻՇԿ ՊՈՆՏԱՑՈՒՆ, եւ մօտ ազգականը Հ. Մինաս Վ. Նուրիխանի, այդ պատուական Մխիթարեան Միաբանին, որ վերջերս Բատուայի մէջ իրեն այցելած միջոցիս, հաճեցաւ տեղեկութիւններ տալ ինձ այս բժիշկի մասին, եւ յայտնել նաեւ թէ նա թաղուած է Տրապիզոնի Ս. Աստուածածին եկեղեցւոյն աւագ խորանին կոնակը, յատուկ տապանաքարով, եւ վրան « Բժիշկ բժշկեալ զանձն քո » արձանագրութեամբ:

Հ. Սիմոն Երեմեան՝ Մխիթարեան ներհույն վարդապետը 1901ին («ԲԱԶՄԱՎԷՊ» 1901, էջ 68 և այլն) այս ձեռագրին վրայ բաւական մանրամասն և լաւ ուսումնասիրութիւն մը հրատարակեց, վերագրելով նաեւ այս առթիւ Մանուկ Պոնտաղիին հեղինակութիւն մը, որ՝ ներուի ինձ ըսել, թէ չափազանցեալ էր և անիրաւ, պատիւը և հեղինակութիւնը աւելի կը վերաբերի Մանուկին հօրը՝ Սահակին քան թէ իրեն։

Այն բոլոր ձեռագիր բժշկարանները, զորս Հ. Մինաս Վ. Բժշկեան Ս. Ղազար բերած է իրեն իւր հօր սեպական, բուրն ալ իւր հաւունն էին. և կը տեսնեմ որ Մանուկ այնչափ ուշադիր եղած է այս կէտին, որ իւր անունին ըով ՈՐԻՆ ԲԺՇԿ ՍԱՀԱԿԵԱՆ բառերը գրել քնաւ չէ մոռցած։ Եւ այսպէս՝ 18րդ դարը կու տայ մեզ երկու բժիշկ՝ Հայր և Որդի, ՍԱՀԱԿ և ՄԱՆՆՈՒԿ Պոնտաղիները, որոնք երախտաւոր կ'ընեն զմեզ այսօր. զի Սիմոնովաթի գործերուն անմահութիւն տուած են, անոնց հետ յաւէտացնելով և իրենց անունները։

ՏՕԹԹ. ՎԱՂԱՐՍ Թ. ԹՈՐՈՍՅԱՆ

Վեմետիկ — Ս. Ղազար

10 փետրուար 1923 (շարունակելի)

ՔՆԱԿԱՆ ՆՇՄԱՐՆԵՐ ԵՂՆԻԿԻ ՄԱՍԻՆ

(Լ. Մարիէսի աշխատութեան առթիւ)

(շար. տես Բազմ. 1925 էջ 196)

Եղնիկի քննադատին յաջողուել է գտնել մի քանի նոր աղբիւրներ — և այս նորա գլխաւոր արժանիքն է։ Հին և նոր աղբիւրները միասին կազմում են մօտ 12 հեղինակից բաղկացած մի փունջ, Դժուար թէ Եղնիկին անմիջապէս այդ հեղինակներէից քաղած լինի այն հատուածները, որ նրա մանուկին ունին։ Աւելի շուտով զուգահեռաբաններն են, որ առնուած են ընդհանուր աղբիւրից։ Արդարեւ, եթէ ձեռքի տակ ու-

նենար Որիգենին կամ Դիոդորին, մեր մատենագիրը չէր բաւականա՛նալ այս կամ այն երկտող օրինակները քաղուածելով. նորանց մօտ իրեն համար պիտանի շատ աւելի նիւթեր պիտի գտնէր։

Եւստինայի դէպս Եղնիկի գործը մի գրական զոդողիկ չէնք է, թէ և տարբեր նիւթերից, տարբեր՝ ըստ որակի և ըստ ծագման։

Այստեղ մենք պիտի բաժանուենք առ այժմ Մարիէսից, որպէս զի կանց առնենք մի հարցի վերայ, որ մեր հետաքրքրութեան նիւթն է և որի պատասխանը չենք գտնում Մարիէսի մօտ։

Մարիէսի աչքում եւս Եղնիկը տեսակ տեսակ քարերից շինած մի գործ է. նա աշխատել է և յաջողել է գտնել այն թելը, որի վերայ նրանք շարուած են. գտել է այսպէս ասած շարադրական գիծը։ Բայց ի՞նչ յարաբերութիւն կայ զանազան մասերի, զանազան քարերի մէջ, ինչպէս են նրանք ըովձերով եկել, նրանց այսպէս ասած ծննդական (génétique) կապը, մնացել է առկախ Գննել այս հարցը, նշանակում է որոշել, արեօք Եղնիկը խմբագրական գործ է թէ սկզբնագիր։

Առնենք յառաջաբանը, այն է առաջին երեք զլուխները, որ Մարիէս ևս ներառութիւն է անուանում. Եթէ մի կողմ թողնենք ինչ որ վերցրած է Արիստոդից և կամ ինչ որ նմանութիւն ունի Բարսեղի Վեցօրեայքին և մնացած մասը համեմատենք իսկական աղբիւրներին՝ Աղամանտ (իոս)ի և Մեթոդ(իոս)ի հետ, յառաջաբանը կը ներկայանայ մեզ իւր հիմնական և թարմատար մասերով։

Սկզբից եեթ Եղնիկը շնչտում է աստուծոյ անհասութիւնը, անքննութիւնը, որպէս զի որոշի հաւատի և գիտութեան սահմանները առաջիկայ բարձր նիւթի մասին ճառելիս։ Նոյնը տեսնում ենք և Աղամանտի յառաջաբանում, ուր այլ խօսքերով միևնոյն միտքն է արտայայտում. «ἐπὶ τῇν ἀξιώραστον καὶ ἀξιώχαστον πίστιν τῇν εἰς θεὸν ἀφορῶντες ἐγχαρτεῖς τῆς ἀμελ- νοнос καὶ τελειοτάτης δόξης γίνονται», այս-